լաւ հրէայն արտաքոյ քաղաքին չտալ թաղել՝ գըմ-
բեթ կապեալ ի չորից սեանց, և սեանցն պղնձի խաչ
զգեցուցեալ, որ են մարմարիոնք, եւ անտի ցվայր
250 քարեայ աստիճանք մինչեւ ցսուրբ Գերեզման
Կուսին որ ի ձորն Գեթսեմանի, և անտի մինչև ի լեառն
Ձիթենեաց ուստի վերացաւ Քրիստոս՝ 800 աստիճանօք։

Իսկ ի տեղւոջ Համբարձմանն ըստ Ցարութեան
եկեղեցւոյ ձևոյ գեղեցկատես գմբեթաձև շինուած 100
կանգուն յերկայնն և 100 ի լայնն, անտի երևի Ցոր-
դանան գետ և Հովր լեառն և բազում գաւառք։ Իսկ
Բեթղեհէմ հեռագոյն է ի Ցարութենէն 220 հրասախ
յարևմտից կողմանէ։ Զափ մեծութեան եկեղեցւոյն
200 կանգուն յերկայնութիւնն և 100 ի լայնն 90 սե-
ամբք մարմարիոնովք, քարեայ կամարակապ, եւ ի
նմա է կրկին այրն զոր Աբրահամ գնեաց ի կալուածս
շիրմացն։ Եւ ներքոյ բեմին սուրբ այրն եւ մսուրն,
ուր սեղան է և պատարագ մատչի։ Եւ յաջմէ եկեղե-
ցւոյն մատուռն, յորում մանկանցն սպանեալոցն ի Հե-
րովդէէ նշխարք պահին, և անտի յարեւելից կուսէ
ըստ Ցորդանանու կողմանէ 3 ասպարեզօք հեռի ի
Բեթղեհէմէ Հովուանոցն (գոն) երկու եկեղեցի։ 7 հը-
րասախ հեռու է յԵրուսաղէմէ յարևելից կուսէ, ուր
Փրկիչն մկրտեցաւ, յորում եկեղեցի սագաչէն խաչա-
նման յարմարեալ՝ 80 կանգուն երկայն, 80՝ լայն, ե-
բեք սեղան խորհրդոյ և պատարագ մատչի, և լեառն
Ձիթենեաց Երուսաղէմի յարևելից կուսէ լինի» (Կաղ.
էջ 420–423)։

5. Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի
Ազգիս մերում (ԺԳ. դար). — «... ինքնակալ թագաւոր
մի և ինքնագլուխ հայրապետի նստցի ի Հայս և ինք-